

Մաքուր մարգարիտ մարմնով,
վարսաւոր սրովբէանըման:

45 3արմատոց ի տունկ փըշոց,
վարդ փթթեալ արմաւ եւ շուշան,
Նոր ծաղիկ ի գնացքս ջուրց,
Հոտ բուրէ ի քիմըս մարդկան:

50 Շաղ առնուս յառաւաւտէ,
ով տեսնի ըզքեզ հիանան:
Ոսկի խընծոր ցանկալի,
յեռեալ ես ընդ սարգիական:

2քնաղ վայելուչ գունով,
երփնազարդ որպէս ծիածան:
Պատկեր նըման հրեշտակի,
55 սոսկալի եւ յոյժ հրաշագան:

2ուր մանրածաւալ գնացիւք,
ելանես ի յոսկի ական:
Ռահ դասուց հրեղինացն,
պահէ գքեզ զաւրքն անմարմնական:

60 Սոսկալի զըմուռ եւ խունկ,
գու աւծումն ես անապական:
Վայելուչ անգին հանդերձ,
եւ ըզգեստ թագաւորական:

65 Տաղիւք երգս դրուատեցից,
դքեզ գովեմ քաղցրիկ ձայնական:
Բոտեալ ծարաւիմ հոգւով,
նըւաղիմ առ քոյդ տեսութեան:

43. A. սրովբէայնման: — 45. A. վարթ: H. չէ: եւ: — 49. H. տեսնէ: — 50. H. խնձոր: — 53. A. երբնազարդ: — 56. A. մանրայծաւալ: H. մաքուր ծաւալ: — 58. H. դասուցն հրեղինաց: — 59. H. պահ: — 64. A. դրաւ տեցից: H. դրուատից: — 65. H. գովեն: — 66. A. հոգով: